

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վ.—Ազուլեցի Մելքոն Փանեանցին).

21.

25 Դեկտեմբ. 1869, Թիֆլիս

Իմ եղբայրապատիւ բարեկամ,

Մելքոն Փանեանց.

Հին տարին հակալական քայլափոխերով մօտենում է իւր աւարտակէտին, և մեք մարդիկ դարձեալ մի տարի յառաջ գնալով, մեք գերեզմանին: Բայց, նախ քան թէ ոտք կը կոխէինք նոր տարու սահմանի մէջ, պիտոյ է մեզ կարգադրել մեր հաչիւ ու համարք Հին տարու հետ, հատուցանել մեր պարտքը, ում հարկ, հարկը, ում պատիւ, պատիւը, ում սէր, սէրը: Եւ ես այս միջոցիս, մի րոպէ խաղաղ ժամանակ գտանելով. կամիմ իմ բարեկամութեան և սիրոյ քաղցր պարտքը հատուցանել:

Ձեր չառ սիրելի նամակը, որում անհամբեր հոգով սպասուած էի, ամօռու Գ-ից արձակուած, անկորուստ հասաւ ինձ երեկեան օրին: Շատ զաւեցայ և զաւում եմ տեսանելով Ձեր նամակից, որ այն ալեւորը¹⁾ պատրաստում է Ձեզ այնքան անսիրտութիւնք, Ձեզ, որ ունիք միայն իրաւունք պահանջելու պատիւ և յարգութիւն իբրեւ անվարձ անձնանուէր սպասաւոր եկեղեցական և ազգային գործի: Ոչինչ մխիթարութիւն չէ ոչ Ձեզ և ոչ ինձ, եթէ ասեմ Ձեզ, որ այս աշխարհի, մանաւանդ թէ Հայոց աշխարհի վարձը անշորհակալութիւն և ապերախտութիւն է: Բայց գիտե՛լ այդ բանը, հարկաւոր է մեզ ամենեցուն յառաջօց: Ոյգ օրհնածը և զոցա բոլոր ազգը ի բնէ անտի այդպէս են եղած, այսինքն ամենին իրահաւատ զէպ ի օտարազգիքը, քան թէ զէպ ի իւրազգիքը, անխտիր, թէ և օտարազգի մարդերի խորհրդակցութիւնքը հազար անգամ վնասակար լինէին մեզ և իւրազգիներին հազար անգամ օգտակարագոյն: Եւ թէ այդ որ բանի ապացոյց է, թողնում եմ Ձեզ արտասանել բուն խօսքը: Բայց այդպէս է, փոփոխել կարելի չէ: Եւ վաղուց գիտէի այդ և հետեւից տեսանում էի, որ մօսկովեան հասարակութեան ընտրութիւնը պատիւ և յարգանքի հետ միասին կապում

1) Ակնարկը Բաշատուր Յովակիմեան Լազարեանցին է վերաբերում. Յ. Տ. Յակ.

էր Ձեր վշին և մի ծանր, անտանելի շղթայ, գործ մի այդպիսի մարդու հետ, որոյ հետ միայն կարող էր վարուել, Եակովովի պէս, քարոյականապէս փռած և չնչին մարդը, բայց ոչ մի ուրիշ և աղնիւ մարդ, մի պատուաւոր ճշմարիտ անձնւոյ Լորա և ես մոլորութիւնով մեր ցանկութիւններից և յոյսերից, խարուկցանք, շատ և ցաւելի կերպով խարուկցանք։ Ես կարծում եմ, որ այդ անախորժութիւնների մէջ առաւել լաւն է սառնասիրտ Միալ և պահպանել Ձեր հոգու խաղաղութիւնը, որովհետեւ վերջովսիւ, իւր անձը պատժել վաճառ յիմարի օտարութեան, ընդդէմ է բանականութեան. բայց երբ փոքր ի շատէ աւարտած էին հաշիւները գործերի հետ միասին, գրել այն ակորին Ձեր հրաժարական թուղթը, ծանուցանելով և բացատրելով նմա որ դուք այսուհետեւ զիտաւորութիւն չունիք այդպէս գործ կատարել, որովհետեւ անարժան էիք համարում զոհել Ձեր ժամանակը և զօրութիւնը մի սպասաւորութեան, ուր փոխանակ վտանգութեան և հաւատի և շնորհակալութեան հնձում էիք միայն անախորժութիւնը և տառապանք։ Եւ իմ ընթացքը Թիֆլիզում վարդերի միջով չէ, այլ շատ ծակոտող փշերի. բայց այն զանազանութեամբ միայն, որ ես կոխելով զգոսա, անդանում եմ և յառաջ եմ գնում, այլ և ծառայում չեմ ամենին անվարձ, այլ փոքր ի շատ է ունեւ շահաստացութիւն։

Դուք կարող էք նկարագրել մաքրով թէ որպիսի Հերքուլէսեան գործ է կեանք և շարժողութիւն գոյացնել այս մեր անկեանք և անշարժ և դադարուն Ասիացւոյ մէջ, որպիսի աշխատութեան գին արժէ այս հայկական խուլ ու մունջ վիճակից դուրս քաշել մեր ազգը, կամ գոնեայ մի քանիսը գոցանից, և տանել զէպի գիտակցութեան պայծառ աշխարհը, այն աշխարհը, ուր մարդս ինքն իւրեան համար է տալիս, թէ ինչ կամէր նա որոշապէս և ինչ է իւր արածը կամ թէ առնելին, այսինքն հասկանալ իւր անձը և իւր պիտոյքը և հարկաւորութիւնը։ Մի դժուարին կացութեան մէջ եմ ես։ Շունչ առնելու ժամանակ չունիմ. բայց ներգործել ստիպուած եմ, որովհետեւ ամենայն աչք հայում են զէպի յիս, և իմ դադարելովս պիտի դադարի ամենայն բան։ Ծուլութիւն և դանդաղութիւն և անմիտ անգործութիւն—անհ իմ հակառակորդքս. այստեղ հարկաւոր է մի զգրկեցուցիչ սաստիկ զօրութիւն, որ զէպի գործ շարժէ միտք և ձեռք։ Խնդիրը անշարժ բազումք, և այնպիսիք, որ իսկ և իսկ պահանջում են իւրեանց լուծումս և սպասել կարող չեն. բայց հնարք և կարող ձեռք լուծանելու զգոսա չկան, կամ թէ միայն գտանելի են կամաց-կամաց, ժամանակով։

Իմ բրօշիւրը չուտով գուա կը գայ և կ'ուսուցանէ Ձեզ և մեր բոլոր մտածող հասարակութեանը թէ արդեօք ինչ կամիմ ես, իբրեւ վերատեսուչ Ներսիսեան դպրոցի, և որպիսի կերպով մտածում էի։

բարեկարգել զնա: Ցաւելի է միայն, որ դպրոցի նիւթական հնարքը չլինելով հարուստ, շատ բան գուրս է մնացած այն պրոգրամայից որ ես իբրեւ նախագիծ կամ նախագիր ուսման գալոց տարու ահա-դեմիական տարու համար հրատարակում էի: Հոգաբարձուքը դիտաւորուած են դալոց տարի շինութիւնք առնել, հին ուսումնարանի աւերակ շինուածի վերին յարկը նորոգել թատրոնական ձևով, որ աւելի չահաւէտ է համարուում, իբրեւ եկամուտի աղբիւր, քան թէ այլապէս: մի այլ բաւական ընդարձակ հողի վերայ վանքի եկեղեցու մերձակաքում կամին իւանութիւնք չինել և մտածում են գոյացնել գոցանից, ինչպէս ասած կայ իմ բրոշլերի մէջ, առաւել ճոխ եկամտական աղբիւրներից մինը: Այս ծախքերի հանդէպ ունի դպրոցի գանձատունը ոչ աւելի քան թէ 10,000 մանէթ, բաց ի իւր տարեկան եկամուտքից 22,000 մանէթ: Բայց պարտք ես ունի դպրոցի գանձատունը:

Ես շատ յաճախ մտածում եմ մի բանի վերայ, որ բաց ի անձնական ինտերեսից իմ համար, ցուցանում է մի մեծ ազդային ինտերես, ինչպէս էք կարծում: Ձեր տեղափոխութեան մասին զէպի թիֆլիզ, ես կարծում եմ գոնեայ որ, եթէ մեք չունինք մեր յատուկ քաղաքական կեանքը—այս միայնակ լայն ասպարէզը ազգի մարդերի առաքինական վաստակների համար, որովհետեւ այդ տեղ միայն կար մեծ չափով և օրէնքի պաշտպանութեան ու հասարակութեան գործակցութեան ներքոյ գործ կատարելու հնար, ուրեմն մեզ փոքր ի շատէ—եթէ պիտի գործ կատարուի ազգի մէջ և ազգի համար, այդ կարելի է միայն այն տեղ, ուր կայ փոքր ի շատէ բազմաթիւ հասարակութիւն, և այնքան առաւել հեշտութեամբ, որչափ առաւել բարեմիտ մարդիկ կային այդ հասարակութեան մէջ և գործունեայ և աշխատասէր և մարդասէր ու հայրէնասէր անձինք: Ձեր վաճառական դործերի համար ես լինելու էք թիֆլիզը աւելի չահաւէտ: Մի վաճառական ձեռնարկութիւն միշտ կարելի էր այս տեղ հիմնարկել: Ձեր համար. տոկոսիքի կուրսը բաւական բարձր է այս տեղ 10-15, մի բնաւոր եւրոպական վաճառքի մաղազին, որ եթէ կամէիք բանալ այս տեղ, շատ օգտաբեր կը լինէր: Ձեզ և հարստութեան պատճառ: Օրէցօր աճում է և զօրանում է զեղիւթիւնը և փառաւոր կեանքը թիֆլիզում: այս տեղ կայ մեծ ասպարէզ վաճառականութեան: Գիտեմ, դու կասես իսկոյն ես արդէն ձերացած եմ և ժամանակը այդպիսի ձեռնարկութիւնների, անցած է. բայց ես կարծում եմ ամենին զէպի հակառակ կողմը, քանի որ մարդս ապրում է, պարտ է գործել և ներդրածել, որովհետեւ այդ է կեանքի պահպանութեան միակ պայմանը: Ով դադարեցաւ գործելուց և ներգործելուց, նա մեռանում է արդէն ժամանակից յառաջ: Դու այս բոլորիս գործում ես և ներգործում

ևս արդարեւ, բայց միայն անշահ ու անօգուտ կերպով, նախ պիտոյ է գործել և ներգործել իւր օգտի համար յատկապէս, յետոյ միւսերի համար, ազգի և եկեղեցու համար եւ կարծում եմ, ոչ, սրտի վկայութեամբ գիտեմ, որ մի, իւր գործով և վաստակով կարող բարեմիտ և ազնիւ մարդ աւելի գործ կարող է կատարել և ազգի համար, այդպիսին ունի մի ամուր նեղուկ հաստատութեան իւր քամակում. բայց մտածել այնպէս զօրաւոր լինել, որչափ ես եմ հասկանում մարդկութեան և աշխարհի իրքը, անկարելի է:

Գիտեմ նոյնպէս, որ քեզ շատ դժուար կը լինի հրամարտել Մոսկուայի հողից ուր այնքան մեծագին տոհմատէնայք Ձեր քնքոյն սիրոյ ամփոփուած են գերեզմանի մէջ, ես այս գիտեմ իր յատուկ փորձից, և ոչ որ կարող է զիս կշտամբել քարասրտութեան մասին. բայց իմ անդոյց և նազելի բարեկամ, ինչ նպատակ ունի մեր կեանքի համար այդպէս խորատոյզ լինել քաղցր ցաւերի անհուն եփկանոսի մէջ, սիրտը ունի արդարեւ իւր սուրբ և յարգելի իրաւունքը, բայց և բանականութիւնը, մեր այրական պարտականութիւնը դէպի մեր անձը և մարդկութիւնը ունին իւրեանց սուրբ և յարգելի իրաւունքը. գեղեցիկ է ապրել իւր մեռածների համար, լինել մերձ իւր նազելի հանգուցեալների գերեզմանին, ժամանակ առ ժամանակ իւր կարօտալից և զթալից սիրոյ համըրչոյնքով ջերմացնել և կենդանացնել մեր սրտի համար այդ սառած պաղած հողեղէն նշխարքը մեր սիրելիներին—բայց եւս առաւել գեղեցիկ է ապրել կենդանիների համար, գործել և ներգործել նոցա օգտի համար: Մեռածների յիշատակը սուրբ և նազելի պահել մեր սրտում այս միայն կարող է մարդս, բայց ոչինչ առաւել մեռանիլ մեռածների հետ, թաղել իւր անձը իւր թաղածների հետ, թաղել իւր անձը իւր թաղածների հետ միասին, անխորհուրդ և անպտուղ բան է:

Այսօր իմ տուն է, քաղցր և դառն մտածութիւնք այս բոպէիս յանկարծ զարթնում են սրտիս մէջ: Ո՛ր եմ ես— ո՛ր են իմ Մոսկովեան բարեկամքը, ահա լուսանում է առաւօտը և ես նստած մտածում եմ թէ Մոսկուայումն եմ, իմ բարեկամքս, իմ ազնիւ, եզրայրապատիւ բարեկամս Մեկքոն, վաղ վաղ կը դիմէ առիս շնորհաւորելու եմ ասնա, յանձնելու ինձ իւր առ ի սրտէ բարեմաղթութիւնքը, նորանոր հաւատիքով ամուր և ամուր հաստատելով մեր բարեկամութեան կնիքը—բայց ո՛չ, այս բոլորը երանգ է, խորհրդաւոր երազ, միայն թէ, ես սպասում եմ, սպասում եմ, մերայիւնք ես իմ հետ միասին, բայց Մեկքոնը յայտնվում չէ և կարող է յայտնուիլ հազարաւոր վերստը բաժանում են մեզ միմեանցից, ես եւրոպայում է, ես Ասիայում: Թող միխիթարովնք այս բոպէիս այն միակ միխիթարութեամբ, որ կարող է տալ մեզ միայն հողեղէն մտածութիւնը, այս և հազարաւոր, դարձեալ

հաջորաւոր վերստնելով միմեանցից հետաւորքը մօտեցնելով է յանդիման կացութեանելով միմեանց և միաւորելով իրարու հետ կեանքի խորհրդաւոր մամբրում:

Մերայինքը այս բոլակէիս քնած են և խորին լուսթիւն պատած է իմ չուրջս: Բայց ամուսինս—արդէն օրհնուած մի բարի գաւակով, որում անուն ենք տուած «Էմմանուէլ երկրորդ» իբրեւ քաղցր յիշատակ մեր յաւերժացած առաջին Էմմանուէլի—երեկեան երեկոյին պատուիրեց ինձ ուղարկել Ջեզ իւր առիւրտէ սիրոյ և յարգութեան ողջոյնը, նոյն քաղցր և զառն զգացողութեամբ լցուած լինելով սիրտը, օրպէս իմ և մեր բոլոր գաւակների սիրտքը Էմմանուէլ երկրորդը, որոյ կնքահայրն էր Յակոբ Սկրոբեանը, առողջ մանուկ է և մի զարմանալի բան, շատ նման հանգուցեալ Էմմանուէլին, բայց առողջածին մանուկ, և մեծ մխիթարութիւն, որ մայրը գոնեայ մինչև այժմ շատ կ'սթնառատ և կարող է յղուցանել իւր զայնկական-մայրական պարտականութիւնը, առանց կարօտ լինելու օտար ստնտուի:

Երեխայքը առողջ են և ուղարկուած են Ջեզ իւրեանց յարգութեան ողջոյնը, միշտ յիշելով Ջեր նազկի անունը սեղանի վերայ: Բայց այսօր արդէն ամենեքեան լցուած են զեզուն և թաթաղուն շափով—Մեկքոնի յիշատակով: Ասեալ է երեխան ազաղակում է իւր մօր սենեակում իսկ ևս վաղուց արդէն արթնացած և քո հետ խօսելով լսում եմ այդ ձայնը, ուրեմն վերջացնեմ նամակս, մտղթելով Քեզ յատուածուստ ամենայն հոգեւոր և մարմնաւոր բարիք գալոց նոր տարու և մեր հայկական տօներին համար: Ընդունիր մեր ամենեցուն առիւրտէ բարեմաղթութիւնքը: Բո անուան շուտով գալոց տօնին:

Քո Ս. Նազարեանց.

Ողջոյն իմ սիրելի բարեկամներին:

22.

Թիֆլիս, 3-ին փետր. 1870

Իմ ամենազնիւ բարեկամ

Մեկքոն Գասպարեան

Շատ ուրախ եմ, որ մի քանի րօպէ կարող եմ զողանալ իմ ժամանակից խօսելու Ջեր հետ և ասել Ջեզ շնորհակալութեամբ հանդերձ, որ Ջեր ամենասիրելի նամակը անցեալ ամսու 13 թուականից անկօրուստ հասած է ինձ: Իմ նամակս առ Ջեզ 18-ից Յունուարի հանդերձ հասուցմամբ առ երեսիս Սահակեանց, կարծեմ որ մինչև այժմ տեղ հասած լինիք և հոգացած: Մի շարաթ յառաջ Երեսիս և զպրոցի հոգաբարձուքը

ուղարկեցին Չեք անուամբ դէպ ի Մոսկուա քսան օրինակ մեր զպրօցական հանդիսաւոր գործողութեան յիշատակարանից, հանդերձ մի տպած նամակով. որոյ գորութեամբ կը բաժանէք այդ օրինակները, որպէս արժան կը համարէ Չեք խոհականութիւնը: Յուսով եմ, որ Դուք այդ յիշատակարանից կը նկատէք, որ այս տեղ մի փոքր կեանք և շարժողութիւն կայ այժմուս, իմ անդադար խմելով և զրգելով, ինքս աշխատելով և միւսերը աշխատեցնելով: Յաւելին այն է միայն, որ գործի ասպարէզը անչափելի ընդարձակ է. բայց գործաւորքը անչափ շատ սակաւ, և այդ սակաւքը ըստ մեծի մասին անկարողք աշխատել և մի օրինաւոր վաստակ վաստակել ազգի համար:

Գլուխս պտոյտ է գալիս տեսանելով աչքիս առաջն կարևոր խնդիրներն միմեանց վերայ զիգացած կուտակութիւնքը, որ իհարկէ մի օրում և մի գիշերում անկարելի է լուծանել: Այս տեղ հարկաւոր են տարիք և շատ տարիք: Ուսումնարանի ներքին տնտեսութիւնը մինչև օրս եղած է մեքենաբար, անուամբ միայն, առանց քննելու և որոշելու նպատակը և այն ճանապարհքը, որ պիտի առաջնորդէին դէպ այդ նպատակը: Ամենեքեան ցանկանում են արդարև հայկական կրթութեան և լուսաւորութեան, բայց թէ այդ բաները ինչ ճանապարհով ստանալի են, դժուար վերայ մինչև այժմ ոչ ոք զազարկեցած չէ իւր ուղարկութիւնը: Թէ ինչպէս պիտի լինի մի աղգային ուսումնարանի զպրօցական կազմակերպութիւնը, ինչ հնարներով կարող է մեր ժամանակներում ուսումը պողարեր կացուցանել մի հայկական ուսումնարանում, այդ բանի վերայ ոչ ոք մտածած չէ, և այդ պատճառով մէք այս րոպէիս կանգնած ենք մի չոր ու ցամաք, անմխիթար անապատի մէջ. կամբք գործք գործել, բայց ոչինչ գործիք, ոչինչ անօթք յառաջագոյն պատրաստած չեն: Տարիքը եկած ու գնացած են, առանց որ և իցէ ուրախացուցիչ կենդանութեան հետք թողնելու: Այս տեղ հարկաւոր է ամենևին նոր չինութիւն, նոր տնկարկութիւն իւր բոլոր սկզբնական դժուարութեամբք. ես այս տեղ ունիմ ոչ թէ յառաջ տանելու որ և իցէ սկսուած, այլ նոր ի նորոյ սկսանելու ամենայն բան, բոլորովին նոր հիմքի վերայ: Դու կ'ասես, այնքան ես առաւել պարծանք, բայց ինչ է այդ պարծանքը մեր ասիական Հայերի մէջ. մի քանի տարու յիշատակ և յետոյ անվերջ մոռացութիւն մի ննջեցածի և մի գերեզմանի մէջ ամփոփածի մի կեդրոտ ու անապատ գերեզմանատան մէջ, ուր հագիւ թէ մի քանի անգամ տարու մէջ ոտք է կոխում որ և իցէ մարդկային էակ:

Չեք նամակը ընթերցասիրելով, անասելի շատ ցաւեցայ Չեք տառապանքի վերայ, բայց դժբա շատ բնական են այն միջոցում, երբ մի մարդ յանձնառու է մի հասարակաց գործի հոգաբարձու-

թեան. որովհետեւ այդ տեղ իսկապէս սկսանում է արդարամիտ մարդու պատերազմը իւր ընկերների տխմարութեան հետ և որքան նա բարեխիղճ ու գործունեայ է, այնքան աւելի արդելքի ու խոչընդոտքի հանպիպում է նա:

Դուք եակուլեանցն չէք, այլ մի պատուաւոր մարդ, մի արդարամիտ աշխատաւոր անձն, բայց այդպիսիքը իսկապէս, գործունենալով տխմարների և անմիտների հետ, պիտի ենթարկուին ամենայն տեսակ անախորժութիւնների: Եւ այդ վաղուց գիտէի. գիտէի որ այս աշխարհի բոլորած պսակը ընտիր և արժանաւոր գլուխների համար, չէ հիւսած վարդերից, այլ փշերից. բայց և հաւատացած էի իմ մասամբ, որ Դուք ունիք այնքան մեծութիւն հոգու, այնքան բարոյական քաջազնութիւն, որ կարող էիք տանել այդ փշեայ պսակին: Եւ յուսով եմ, որ այդ փշեայ պսակը մի օր կը դառնայ վարդեայ պսակ:

Եւ կը ցանկանայի, որ Դուք, երբ որ Ձեր հասարակաց գործերը աւարտած էիք և հանգստացած, հաստատուն կերպով մտածէիք որսչի Ձեր կեանքի նպատակը: Ինձ շատ դժուարանում է կեանքը Թիֆլիսում առանց Ձեր, իմ միակ բարեկամիս աշխարհի վերայ. Հեռուից թէ մօտից մասնակից լինել իւր բարեկամի ուրախութեանը և ցախին, մեծ զանազանութիւն է իմ տան բարեկամը մինչև այսօր Դուք էք եղած. Ձեզանով զարգարուած էր իմ կեանքս մինչև այսօր. բայց այժմ ամենեւին որբացած եւ և իմա՜յի՛նքս, ապրում ենք միայն Ձեր քաղցր յիշատակով:

Մանուկ էմմանուէլը արժանի է Ձեր աչքին, Ձեր սիրուն աչքին, Ձեր քնքուշ հայրական-բարեկամական գրկախառնութեանը, մի գեղեցիկ լիամարմին երեխայ է և շատ կենդանի, երեսով և ձայնարկութեամբը, Համբուրում է Ձեր ձեռքը երեխայական խոնարհութեամբ:

Աղէքսանդրը և Օլինկան շատ սիրով և մեծարանքով համբուրում են Ձեր Ձեռքը և մաղթում են Ձեզ ամենայն բարօրութիւն և կարօտ են Ձեր քաղցր տեսութեանը:

Ի՛նչ վիճակի մէջ են մեր ննջեցած սիրելիների դամբարանքը. եւ ամենեւին աներկմիտ եմ, որ Ձեր բարեկամական դուրժը նոցա վերայից անպակաս կը լինի, և Դուք կը հոգաք իմ մեռածների տխուր պիտոյքը, որպէս Ձեր սեփականների:

Իմ ամուսինս ուղարկում է Ձեզ իր ամենաջերմ ողջոյնը և ամենեւին մասնակից է իմ առ Ձեզ սիրոյն և մեծարանքին, և երանի է ապիս այն օրին, երբ կրկին կարժանանայ Ձեր քաղցր և սիրալից տեսութեանը:

Իսկ եւ հոգով և մաքով գրկախառնելով զՁեզ

Մնամ բոլորովին Ձեր Ս. Նազարեանց:

Ողջին մեր բոլոր բարեկամներին. վաղուց գրած եմ Շահադի-
զին. գրեցի քանի մի օր յառաջ և Տէր-Յարութիւնեանին:

23.

Թիֆլիս, 12 Մարտի 1870

Իմ եղբայրապատիւ բարեկամ

Միլբոն Գասպարեան,

Արդէն գիշեր է, ժամը $1\frac{1}{2}$ տասներկուսի. երեսուցը գր-
նացին արդէն հանգստանալու և մանուկ էմանուէլը ես կամի
մտանել իւր ննջարանը, բայց դեռ ես մօր գրկումն է և կամենում
է զովանալ մայրական ստինքի երանական առատութեամբ և օրհնու-
թեամբ: Ուրեմն ժամ է ինձ, այս հանդարտութեան մէջ հոգով ու
մտքով պանալ առ Ձեզ և խօսել Ձեր հետ քանի մի բան:

Ձեր ամենասիրելի նամակը անցեալ փետրուարի 24 ից անկոր-
ուստ հասած է ինձ: Լօւում եմ, որ մեր ուսումնարանի դպրոցական
հանդիսի յիշատակարանի տետրակները արդէն հասած են Ձեզ և
բաժանուած մեր ժողովրդին Մոսկուայում: Ես յոյս ունիմ ժամա-
նակով լսել Ձեզանից, թէ այդ գրուածը որպիսի տպաւորութիւն
արած էր մեր հասարակութեան վերայ այդ տեղ: Արդարեւ, դա մի-
այն մի փոքրիկ սկիզբ է՝ այն դպրոցական հանդէսների և ճգնողու-
թիւնների, որ տակաւին մնում են մեզ լցուցանելու դպրոց օրերում:
Եւ ոչ որ ինձանից առաւել խոր և կենդանի զգում չէ, թէ այստեղ
մեծ գործ կար կատարելու. միայն վնայ ինձ, հունձք բազումք են և
մշակք սակաւք: Եթէ ձերացած ես չլինէի ես, և իբրեւ հիւթալից և
բազմատար պատանի, կարող չէի ես երբէք մտածել, որ միակ
մարդ կարող է այս տեղ ամենայն ինչ վճարել, Բայց որ կողմը
նայում եմ, անչափ պակասութիւն գործակատար մարդերի, պակա-
սութիւն յարմարութիւնների, ասիական անհոգութիւն և անխելութու-
թիւն, խօսք և զրոյց չատ, բայց դանդաղ և թոյլ գործակատարու-
թիւն: Ի հարկ է լուռ մնալ ես կարող չեմ այս տեղ մեր և մի անձն,
որ առած է իւր վերայ մի պաշտօն, որոյ համար պատասխանատու
է առաջի Աստուծոյ, ազգին և իւր խղճմտանքին: Կամաց-կամաց,
բայց արդէն բաւական սաստիկ սկսում է որոտալ ձայնս հոգարար-
ձական ժողովի մէջ զանազան կարևոր խնդիրների վերայ, որ ցա-
ւելի է ասել, չատ ու չատ բազմաթիւ են, և կարող են միայն
ժամանակով լցուցանուիլ և հետ զհետէ: Պիտոյ է ասել, թէ
Հոգարարձուք յարգում են իմ խօսքը, միայն թէ ուսումնարանի
նիւթապէս չբաւոր վիճակը չատ սահմանափակում է նոցա կարողու-
թիւնը իրադործութեան մասին:

Դու շատ դանդաղատաւոր ես քո առանձնութեան վերայ և այժմեան աշխարհի սովորական բարեկամների վերայ, որ ժողովվում են բարեկամի տանը թուղթ խաղալու համար, կամ որպէս ասում են ժամանակ անցուցանելու Ոմանք ես կամէին փոքր ինչ արծաթ ձեռք բերել խաղի մէջ: Յիրաւի արդպիսի ժողովները շատ սառն բաներ են և շատ փոքր սնուցիչ մարդկային հոգուն, մանաւանդ մի ծանրաբաշտ, մտածող մարդու, որ կը ցանկանար փոքր ի շատէ խօսելով և լսելով իւր ընկերին, ներս մտանել կեանքի խորութեան մէջ, և ուսանել մի բան կեանքի համար, և ոչ թէ առօրեայ գրոյցներ տալ թղթախաղութեան պատկանեալ դիպուածների վերայ: Ես կորած եմ այդպիսի հասարակութիւնների մէջ, որ նոյնպէս շատ հասարակուած են այս տեղ թիֆլիզում, շատերը այդպիսի թղթախաղութեան ժողովները համարում են միակ հնարը մօտաւորութեան մարդերի հետ. և զորանոյ՛մ ճարում են իւրեանց ծանօթք և բարեկամք, ուրեմն և օգնականք այս և այն գործի մէջ:

Մեր բարեկամութիւնը միմեանց հետ ի սկզբանէ անտի դրած է եղած ամենին ալ հիւքի վերայ. և այդպիսի բարեկամութիւն կարելի է միայն երկուքի մէջ, որ ճանաչելով միմեանց մէջ մի ազնիւ և պատուական մարդկութիւն, սիրած են զմիմեանս և յարգած են առ ի սրտէ և իւրեանց մէջ հաստատած են մի տեղական կապ սրտակցութեան, կեանքի ուրախութիւնքը և տրտմութիւնքը միասին վայելելու և կրելու Այսպիսի պիտոյք շատ սակաւ մարդիկ այս աշխարհի վերայ ունին կամ թէ զգում են իւրեանց մէջ, նոքա բաւական են ինքեանք իւրեանց, իւրեանց նեղ, չոր ու ցամաք էգոյիսմի, անձնասիրութեան պատճառով: Դոքա կարօտ չեն օտարի սիրուն և ներքին յարգութեանը. բայց ես և Դու միշտ այլապէս ենք մտածած. այսինքն բարեկամական հաղորդակցութեամբ միմեանց բաղդաւորութեան և անբաղդութեան, ցաւի և ուրախութեան արտասուքի, մխիթարել և յարգարել մեր կեանքը, երկուստեք: Այս մի աստուածեղէն պարզ է, որից աւելի պատուական բան չունէր աստուածութիւնը մարդկութեանը պարգևելու:

Շատ ցաւում եմ, գրել Ձեզ՝ որ տեղին հասարակութիւնը, մինչև մեր հոգաբարձուք անգամ և լսել չկամին, թէ գոնեա՛մ պատշաճը պահպանելու համար, պիտոյ էր նստիլաբեր լինել Որիստաֆօր Եակիմովիչի բիւստի և ստիպանդիաների հիմնարկութեան համար: Մի ջան միայն լսում եմ ամենեցուն բերանից, թէ Որիստաֆօր Եակիմովիչը Լազարեանց ուսումնարանը դնելով նախաբարութեան իշխանութեան ներքոյ, չինել է զնա Ռուսաց գիմնազիա, որպէս թէ յառաջուց այդպէս չէր դա, չէր կառավարուած միևնոյն օտար հոգով, որպէս և այսուհետև կառավարուելու էր: Այս ժողո-

վերդի համար բանի իսկութիւն չկայ. այլ բոլորը անուն է և երևոյթ. Բանի մարդերի ևս բացայայտեցի, որ այս տեղ խնդիրը նորա վերայ է, որ Հայոց ազգը մի բանով յայտնէր իւր շնորհակալութիւնը Լազարեանց ազգատոհմին նորա ազգին արած բարերարութիւնների փոխարէն, բայց բոլորը իզուր է. սոքա զատում են այդ բոլորը ներկայիս չափով ու կշռով, այսպէս որ ևս ստիպում եմ լռել. Պարոն Քանանեանը գրած էր ինձ այս մասին, և ևս իմ կողմից առաջարկեցի մեր հոգաբարձական ժողովին, որով և ինչ նուիրապետութեամբ արդարացնել իւրեանց պարծանքը, բայց զինի հրապարակով լռութիւնից դէպ ի իմ գրաւոր առաջարկութիւնը, ակնարկեցին ինձ ապա, որ այն առաջարկութիւնը պիտոյ էր վերացնել իմ թղթի մէջ այս առաջարկութիւնների շարքից, որ ևս արած էի առհասարակ ուսումնարանին պատկանեալ խնդիրների մէջ:

Մեր առտին կեանքը, փառք Աստուծոյ, հոսում է մինչև այժմ խաղաղ ընթացքով: Ես աշխատում եմ, որչափ կարելի է, իմ կողմից մեղմ տեղատուութեամբ հետի պահել ընտանիքի մէջ երկպառակութեան չար և կործանիչ օրինակը, որ քանդեց և ջաղճախեց իմ առաջին տունը: Աստուած տայ, որ ևս այսքան դառն և լեղի փորձերով ուսած ու դաստիարակած, խաղաղութեամբ և բարի ծերութեամբ աւարտէի իմ կրկին անգամ սկսած կեանքս. այլապէս կարող չեմ խօսել, արդարեւ, ևս երկու անգամ եմ ապրում այս աշխարհի վերայ. անցածի յիշատակները մոռանալ կարող չեմ. դոքա իմ կեանքի պատմութիւնն են, թէև աննորոգելի և անփոփոխելի, ինչպէս ամենայն անցած բան, բայց և խորհրդաւոր, որովհետև դոցանից յառաջացած է իմ ներկայն, որոյ հետ պիտի կամայ թէ ակամայ հաշտուիմ, որովհետև միշտ կուտել նախախնամութեան կամ բազդի հետ, յիմարութիւն է: Իմ ննջեցեալների մասին Մոսկուայում ինչ հարցանեմ Ջեզանից, որպիսի դրութեան մէջ են այդ իմ անմոռանալի ցաւերի անվերջանալի նիւթերը և նոցա հողեղէն նշխարների պահարանքը: Ներքի իմ հարցումնս, ազնիւ բարեկամ, այդ շատ բնական է մարդկային սրտի խորութեան և մեծապարտենակութեան համար, որովհետև նա, և իմս մանաւանդ կամ էր անցածը, ներկան այն և դալոյը բովանդակել իւր զգացողութեամբ իբրեւ մի հատ ամբողջ պատկեր կեանքի, առանց որոյ նորա կեանքը անկեանք է:

Մերայինք ամենայն սիրով և յարգութեամբ և մեծ կարօտով ողջունելով և համբարելով Ջեզ, իմ տան բարեկամիւ պամենայն բարեմասնութիւնս:

Զեղ սիրող եղբայր

Ս. Նազարեանց.

Լաւ կը լինէր, եթէ Հանդէս նոր հայախօսութեան գրքի հատորները յաջող միջոցով ուղարկէիր Թիֆլիս։

24.

Թիֆլիս, 29 մարտի 1870.

Իմ ազնիւ, եղբայրապատիւ բարեկամ,

Ձեր շատ սիրելի նամակը ամսուս 14 ից արձակած, հասաւ ինձ երեկեան օրին, անկորուստ Յուսով եմ, որ մինչև այժմ ստացած լինիք Ձեր նամակի պատասխանը (այսինքն 24 ից փետրուարի գրածին) որ ուղարկած է սոյն մարտի մէջ, բայց թէ որ թուականին, յիշելի չէ ինձ։

Այս Ձեր վերջին նամակի բովանդակութիւնը շատ ցաւեցուցիչ զիս. ինչ որ մտքով գուշակում էի, այժմ գործով կատարվում է Ձեր ու ախորի մէջ, Դա, եթէ առնունք զորա բնաւորութիւնը, պիտոյ է ասել, շատ բարի մարդ է, բայց թուլամիտ և մի օրի մէջ հազար տեսակ փոփոխական, որպէս Լազարեանց բոլոր ազգատոհմը, և այդ պատճառով ի բնէ անտի ամենայն վատթար Ռուս և Հայ, իմանալով դոցա տկարամտութիւնը, խաղ է արած դոցա հետ, իւր քսակը լցուցանելու համար։ Տկարամիտ մարդիկ, այս աշխարհումս, միշտ գերի են օտարի խելքին, թէ բարի և թէ նենգաւոր խելքին. և այդպիսի մարդերի հետ, որովհետև դոքա ապրում են ոչ իւրեանց, այլ օտարի խելքով ու հասկացողութեամբ, շատ վտանգաւոր է մի մտածող, խոհական մարդու գործ ունենալ այդտեղ ամենայն բոպէ պիտի ծնանի պատճառ տհաճութեան, բարկութեան, զայրացման և յուսահատութեան. բայց դա բոլորովին բնական է։ Խրիստաֆօր Եակիմովիչի բարեսրտութիւնը իմ աչքում ոչինչ կշիռ չունի, որովհետև դա երկու կամ երեք բոպէի տնօրէնութուն ունի, ոչ աւելի. այդ բարեմտութիւնը կարող է չար ազդեցութեան ներքոյ ամենայն բոպէ յեղափոխուել և դառնալ մի կատարեալ խելագարութիւն և դիշատիչ գազանութիւն։ Բայց այդ մի ընդհանուր ցաւ է մարդկութեան մէջ, կամէի ասել, բոլոր մարդերի մէջ, որ այդպէս խորդ մայրաբար խնամարկուած են բնութեան ձեւամբ, որոց տուած չէ մի հաստատուն մտածութեան և և կամքի կարողութիւն, որ մի եղէգն են, ամենայն բոպէ շարժուն սորա և նորա, ըստ մեծի մասին վատթարները (որովք լցուած է այս մեր մարդկեղէն աշխարհս) հողմից։

Դուք և ես ունիմք արդարև ողբալու և արատասեւլու այդպիսի մարդերի թշուառութեան վերայ. բայց ոչ դատապարտելու։ Այնու ամենայնիւ խելացի մարդու պարտականութիւնը դէպ ի իւր

անձը և իւր խաղաղութիւնը մնում է այն, որ նա միշտ հեռի պահէ զինքը այդպիսիներից, և եթէ բարեմիտ հաւատաւորութեամբ, իւր ազնուամտութեամբ մոլորուած, գործ էր սկսած այդպիսիների հետ կամ զգոյշ լինել ամենայն քայլափոխում, որ շատ զժուար է, կամ թէ, որչափ հնար է, չուտով յետ քաշուիլ և հեռանալ, որովհետև այլապէս վերջ լինելու չէ տհաճութեան և խռովութեան:

Մեք ամենեքեանքս մեղապարտ ենք Ձեր առաջի, Մոսկուայի հասարակութիւնը և ես իսկ, ձգելով զՁեզ այդ դժոխային կրակի, այդ անլերջ, անշահ և անպէտ տառապանքի, մէջ՝ բայց դու արժանի էիր և ես ամենևին այլ վարձատրութեան և շնորհակալութեան, քան թէ գտանում ես: Մեք սխալուեցանք և չարաչար սխալուեցանք. մեր միակ փրկութիւնը է Ձեր վեհանձն, քրիստոնէական ներողամտութիւնը: Ինձ թէ որչափ ցաւելի է Ձեր պատուական անձը, կարող չեմ բառերով բացայայտել, որովհետև դա խօսքով անբացայայտելի է, զգալի է միայն սրտով, որ զՁեզ սիրում է: Ի փոստ և ի սէր Աստուծոյ խնայեցէք Ձեր կեանքին, դա հարկաւոր է նախ Ձեզ և յետոյ Ձեր բարեկամներին. և հրաժարուեցէք այդ երէցփոխանութիւնից, որ մինչև օրս պատրաստած է Ձեզ միայն դառն սրտացաւութիւն, ոչ մի ուրախութիւն: Լազարեանց հարկաւոր են եակուլովներ և Գրիգորեաններ. նոքա արժանի են միայն այդպիսիների, բայց ոչ մի ազնիւ և անձնանուէր, պատուական փանեանի: Ասում եմ Ձեզ և խնդրում եմ վերջացնել գործը Լազարեանց հետ. եթէ ճշմարիտ է, որ հասարակութիւնը յարգում է Ձեզ առ ի սրտէ, թող ապա պաշտպանէ Ձեր պատիւը և պահանջէ հատուցումն Ձեր արդէն արած և ձեռամբք չօշափելի մեծ մեծ բարեկարգութիւնների համար. թող ձայն տայ, թող վրէժխնդիր լինի վշտացած ճշմարտութեանը:

Դու հարցանում ես իմ առնչութիւնների մասին դէպ ի թիֆլիզի ժողովրդականքը և դէպ ի վիճակաւոր Մակար առաջնորդը: Ժողովրդականների հետ ես գործ չունիմ, և ժողովրդականք չդիտեմ ես այս տեղ, բայց ի մի կեղտոտ, ազէտ և ազեղ ամբոխից: Երևելի հասարակութիւնը այս տեղ, հայ ես չէ, այլ ամենևին մեռած և գոսացած հայկական լուսաւորութեան ինտերնաներից, ուտում խմում է և չըջում է կլուրներում: Ես այստեղ կանգնած եմ մի անմխիթար անապատի մէջ, ամենևին միայն իմ ճանապարհս այս է. տնից ուսումնարան և ուսումնարանից տուն: Ամենայն հինգշաբթի օր հոգաբարձական խորհուրդ է լինում, ուր և ես միշտ առաջիկայ եմ և լցուցանում եմ իմ պաշտօնս խօսելով և առաջարկելով այս և այն հոգաբարձութիւնը և բարեկարգութիւնը, որում կարօտ է մեր ուսումնարանը:

Այս տեղ ամենայն բան կարօտ է նոր ի նորոյ ստեղծագործ-

ծութեան, նոր արարածի արարչագործութեան. հարիւրաւոր խնդիրը կուտուած ու դիզուած են այս տեղ. ինչ է այս տեղ միապիւլս մարդու որոտալ ու գոռալ, երբ ամենայն խնդիր հանդիպում է հարիւրաւոր արդելքի Սրծաթ չկայ, մարդիկ չկան Միտական ուսումնարանները կորած անկարգութեան մէջ, որովհետեւ վարժապետը հաց չունին ուտելու Մեր ուսումնարանի պրօգրամման տակաւին պատրաստ չէ և չկարծեմ թէ պատրուաստուէր գալոց ուսումնական տարու սկզբից յառաջ, Ամենայն նորոգութեան և բարեկարգութեան շարժող հոգին ես եմ. բայց մի մարդու, մանաւանդ իմ պէս ամենայն բոլի գրադուած մարդու զօրութիւնքը շատ փոքր են այսքան բեռների տակ Շնորհակալ եմ Հոգարածուններից, դոքա յարգում են ինձ և իմ ձայնս միշտ կշիռ ունի նոցա առաջի, բայց սրբազանը սառնահոգի մարդ է, գրեթէ միշտ բացակայ հոգարածական խորհուրդներից. հրաշալի նախադաս աթոռակալ այդ ժողովի իմ յարակցութիւնքս նորա հետ լաւ են. բայց ինչ օգուտ, նա ինձ կարող չէ լինել մի լուսաւոր բարեկամ, որովհետեւ ազգէտ և անհոգ մարդ է, միշտ հիւանդ հոգով և մարմնով, ես մեծ անկարգութիւնք եմ տեսնում նորա վիճակի և եկեղեցում, որ կատարեալ բազար է, տուն ամբօխի և փողոցի կեղտոտ ու պատառոտուն տղաների, որ մինչև սեղանի առջև և դասերի մէջ ներս են վաղում, կանգնում, խօսում, ծիծաղում, և ոչ ոք ուշադիր չէ այս բանին, և այս եղիսկուպոսանիստ մայր վանքի եկեղեցում Գարդութիւն և ոչ մի, հոտած փտած քահանայք, կատուածայն տիրացուք Ոչինչ հոգարածութիւն ոչինչ բարեկարգութեան մասին եւ ժողովուրդը ոչինչ սիմպատիայք չունի դէպ ի նաւ ես մին մին պատահում եմ այս եկեղեցում, բայց մի օրինաւոր մարդ չեմ տեսնում այս տեղ, բոլոր կեղտոտ ամբօխ և փողոցի տղայք, ես լուս եմ մինչև այժմ, բայց որ խօսեմ Սրբազանի հետ կարկուտ պիտի թափուի և կայծակներ պիտի իջանեն նրկներից:

Մեր ընտանիքը, փառք Ամենակալին, ողջ են և ուղարկում են Ձեզ իւրեանց կարօտագին ողջօնը և թէ որպէս կը ցանկանային Ձեզ գարծնալ տեսանել և համբուրել իւրեանց մէջ, անբացատրելի է խօսքովս Գուց է մի օր կը հասանի այս բոլին երանական էմանուէլը աճում է և զօրանում է Աստուծոյ ողորմութեամբ և համբուրում է Ձեր ձեռքը:

Բոլորովին Ձեր Ս. Նազարեանց.

25.

Թիֆլիս 14-ին Մայիսի 1870.

Իմ պատուական բարեկամ

Մեղքոն Գասպարեան,

Ձեր շատ սիրելի, անհամբեր մտքով սպասած նամակը ան-

ցեալ Ապրիլի 30-ից ստացայ այս օրերիս. ուրանիս եւմ յոյժ լսելով Ձեր առողջութեան լուրը և մաղթում եմ Ձեզ ամենակալ Տիրոջից ամենայն բարեմասնութիւն հոգեւոր և մարմնաւոր:

Ընթերցասիրելով Ձեզ հոգաբարձութեան նկարագրութիւնը Զատիկ տօներին զարգարել և պայծառակերպել Ձեր խնամարկութեանը յանձնած եկեղեցին Մոսկուայում, տիրութեամբ և տրամութեամբ մտաբերեցի մեր Թիֆլիզեան եկեղեցիներէ ամենեկն անշքութիւնը, ամենեկն կեղատուութիւնը և ապականութիւնը, որ արգարե, հասած է մինչև այն աստիճան, որ ոչ մի խելացի և մտածող անձն զգում էր իւր մէջ որ և իցէ կարիք կամ յօժարութիւն ոտք կոխել զոցա շէմքի վերայ: Եկեղեցին դարձած է այս տեղ կեղատու ամբօրի տուն: Եթէ Մոսկուայում այս բոլորիս զուգած ու զարգարած հարսնի պէս փայլում էր մեր եկեղեցին, փառք ու պարծանք Ձեզ. միայն թէ ցաւելին և շատ ցաւելին այն է, որ մեր Հայերը տակաւին չեն հասած այն կատարելութեան կէտին, որ հասկանան և ճանաչեն մի երախտաւոր մարդու բարեբարութիւն և փոխանակ շնորհակալութեան սովոր են: Կտացնել և ցաւեցնել անգամ այդպիսի անձն: Մարդկութիւնը իրնէ անշնորհակալ է, բայց մեր Հայերի ապերախտութիւնը արդէն մի տարօրինակ բան է: Շատ տրտում է իմանձը, մտածելով այդ խնդիրը, և ուրախ կը լինէի օր մի յառաջ լսել, որ Դուք ազատուած էիք այդ վրդովեցուցիչ և հոգեմաշ գործիչ, մի անմիտ և անզգայ ժողովրդի եկեղեցու երեցիփոխանական հոգաբարձութիւնից, մի դառն յարակցութիւնից այնպիսի աշխարհ, հետ որոյ անզգամ զոքը և աւազակը աւելի սիրելի են քան թէ Ձեր արդար և անարատ անձը:

Ձեր տուած ծանօթութիւնքը իմ ծրարի մասին եւ արդէն վաղուց գուշակում էի: Եթէ Մոսկուայում կարող չէր լինել հասարակաց կարծիք մի գիտնական գործի վերայ, որովհետև մտածող և հասկացող հասարակութիւնը չկայ, նոյն բանը տեսանում ենք և այստեղ, միայն թէ, փառք Աստուծոյ, այս տեղ կան մարդիկ, հոգաբարձուք և փոքր ի շատ է մարդիկ մեր չըջակայ կողմերում, որ այդ աշխատութեան մէջ տեսանում են և տեսան թէ՛ ներսիւտեան դպրոցը մի մեծեալ դիակն չէ, այլ ցուցանում է կենդանութիւն և շարժողութիւն: Եւ դիտեմ արդարեւ թէ նրտեղ է մեր այսպիսի և այլ միւս թշուառութիւններէ ազերւոր, բայց ինչ օգուտ, օգնել կարող չեմ: Ինչ որ մի ազգ իւր յատուկ անմտութեամբ կարողացել չէ պատրաստել իւրեան—մի ազատ քաղաքական վիճակ, որոյ մէջ միայն կարելի է ընկերական կեանք և ընկերական առաքելութիւնք, արդիւնազործութիւնք, որոց կարօտ էր հասարակութիւնը—այդ հնարաւորել մեզ անկարելի է, որովհետև ոտքի

պատուանդան չունիմք, ժողովուրդ չունիմք, հասարակութիւն չունիմք, ոչ կարօտողք և ոչ պահպանողք լուսաւորութեան և յառաջագիմութեան գործին:

Մեր Հայերը կորուսած ամենայն բարոյական բարիք, ամեն միւր խնդրելով միայն իւր անձնական նիւթեղէն օգուտը, կամին ամենայն բան լինել, բայց ոչ Հայք, մտածող, ուսանող և իւրեանց կենդանութիւնը նորոգող Հայք, որովհետեւ դորա համար կարեւոր են անասելի քանք և աշխատութիւնք, որ յանձն առնուլ դժուար է մի հեղգամիտ, թուլամորթ և ծուլութեան մէջ խորասոյգ եղած ժողովրդի Սյս մեր ընդհանուր ազգային նաւաբեկութեան մէջ ոչինչ է մնում մեզ, եթէ ոչ ամեն մինիս մի տախտակի վերայ լող տալով ջրի մէջ, դէմ ի ցամաք ելանել մի ծովափում, ուր կարող էինք իբրեւ օտարականք օտարներէ մէջ փոքր ինչ գոնեայ մարդկային կեանք վայելել:

Կաթուղիկուսը ամուսն մինին մուտ գործեց թիֆլիս, և կամի ամառնային միջոցը անցուցել այստեղ: Թէ ինչ խորհրդով է եկած տեղս, դժուար է ասել հաւաստեալ: ամենայն բան ծածկութեան մէջ է պահուում, ինչպէս սովորութիւն է Հայերի մէջ: Տաճկաստանի Հայերը պահանջողութիւնք ունին մեր տէրութիւնից իւրեանց կաթուղիկուսի իրաւունքի մասին, որ նոցա կարծիքով վշտացած են այս և այն սահմանադրութեամբք Հայոց եկեղեցւոյ պօլօթենիայի մէջ: Բայց իմ կարծիքով դոքա պահանջում են մեր տէրութիւնից մի բան, որ ոչինչ տէրութիւն կարող չէ տալ իւր հպատակ հոգևորներին, կատարեալ ազատութիւն:

Ջերմութիւնը թիֆլիզում բաւական սաստիկ է. և ես գործերի և հոգսերի մէջ խորասոյգ եղած: Պիտոյ է աշխատել, բայց ջիղերը թուլացած, ներգործում են դժուարութեամբ: Իւլինկան իւր երկու երեխաներով մեր մօտ է և ամառը կանցուցանէ մեր հետ թիֆլիզում: Նա ուղարկում է Ձեզ շատ սիրոյ և յարգութեան ողջոյնը:

Իմ ընտանիքը, ողորմութեամբ Սամեակալին ողջ և առողջ են և ողջունում են Ձեզ մեծարական ողջունով: Խնդրեմ ընդունել իմ առ ի սրտէ յորհակալութիւնը վասն Ձեր սիրալից բարեկամական հոգաբարձութեան մեր գերեզմանների մասին Մոսկուայում:

Շատ սիրով ողջոյն և մեծարանք մեր բոլոր բարեկամներին Մոսկվայում, պարոն Բարանոսովի ընտանիքին, Տէր Յարութիւն քահանային և մեր Սմբատ Շահաղիգեանին:

Ձեզ առ ի սրտէ անփոփոխ սիրով սիրող և յարգող
Ս. Նազարեանց.

(Շարունակելի)